

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք եւ չեն տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Երբ կ'ուզե՛ք «Հայեղի» ին մեջ աղոտ երեւնալ,

Պարսիք սխումն եւ ազնիւ դէմք ձեր ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ



(ԱՅՍՕՐ ՈՒԱՆ ԹՂԹԱՔԵՐ)

Բարեգործութեան նոր եղանակ մը հընարած ու գործադրած է Տիար Ղազարոս ձէնազեան Ակնեցի ազգայինը, որ յերու պաշտպանութեան ազնիւ գործին մատնակցելու գործին մէջ Տ. ձէնազեան իր կեանքը 100 ոսկիի ապահովագրեր է Ապահովագրական ընկերութեան մը յանուն Ազգ. Պատրիարքարանի, պայմանով որ եթէ ինք մեռնի՝ այդ գումարը յանձնուի Պատրիարքարանի, որ իր կարգին փոքր պետութեանց արժէթուղթեր դնէ և անոնց տոկոսովը Ազգ. Հիւանդանոցին մէջ Ակնեցի որբ տղեկ մը դաստիարակուի, և այն պարագային որ այդ արժէթուղթերը բաւականաչափ պարգև մը շահին, այդ գումարը իբրև դրամադրութիւն գործածուի և անոր արտադրելիք շահը բարենպատակ հաստատութեան մը յատկացուի գիտութեամբ օրուան Պատրիարքին և Վարչութեան:

Ս. Պատրիարքը ընդունելով ապահովագիրը, հրամայե՛ր է արձանագրութեան դիւանի կապակց տուժարին մէջ արձանագրել զայն և օրհնութեան կոնգակ մը ուղղել Տ. ձէնազեանի:

Տեսէ՛ք ինչ առաւելութիւններ կը ներկայացնէ բարեգործութեան այս եղանակը: Նախ կտակարարը տարեկան համեմատաբար փոքր գումարի մը վրձարմամբ իր նպատակին կը հասնի և իր մահուան պարագային, իր ժառանգորդներուն ուղղակի ու է զրկանք ըրած չըլլար: Երկրորդ՝ եթէ երբէք մեռած պահուն իր թողած հարստութիւնը ապահովագրուած գումարին եւ ապատիկէն պակաս իսկ ըլլայ, Պատրիարքարանը իբրաւունք կունենայ պահանջելու հանդուցեալի կամքին կատարեալ գործադրութիւնը, որովհետեւ բարեգործութեան այս ձևը բոլորովին կտակի մը չի նմանիր, այլ նուիրատուութեան (հիպէ): Բարեգործական նպատակի մը յատկացուած այդ գումարին իբրաւունք տուող գործողութիւնը, այսինքն թրիմներու վրձարմամբ ամեն տարի տեղի կունենայ, և մահուան օրը՝ բարեգործութեան հեղինակ եղող անձին ստացուածքէն արդէն ամբողջապէս դուրս ելած է: Այնպէս որ, ըստ օրինի, այս եղանակը չենթարկուիր պաշտ կտակներու համար ընդունուած այն սկզբունքին որով կտակարարը իր ստացուածքին մէկ երրորդը միայն կրնայ կտակել:

Ակնեցի ազգայինին օրինակը հետեւելի է և թէ ու է անհատ՝ տարեկան

համետ վճարումով մը օր մը կրնայ իր մահուընէ ետքը՝ բարերարի անուն մը թողուլ և օրհնուած յիշատակ մը այն հասարակութեան մէջ, որուն կը պատկանի:

Արեւելք

— Պատրիարքարանը խնդրեր է ձեռնհաս իշխանութենէն որ ըստ օրինի առանց մաքսի զրկուին գաւառային վարժարաններու վերաբերեալ գիրքերը, իշխանութիւնը գոհացում տուեր է այս խնդրանքին:

— Մոսկուայի համալսարանէն այս տարի 150 հոգի վկայական ստացած են, 13 կին և 237 այր: Կիներէն երկուքը հայ են, տիկին Մարգարիտ Օհանեան և օրիորդ Էլպիս Գալանթարեան, իսկ 237 այրերէն եօթը հայ երիտասարդներ են:

— Հունգարիոյ Կէրլա քաղաքը 1700ին հիմնուած ըլլալով, հայ կաթողիկեպոստոս Հ. Աւգոստինոս Ողարեանի ձեռքով, այդ քաղաքին բնակիչները՝ —որոնց մէջ ո՛վ գիտէ քանի հայ մընացած է—, պիտի տօնեն անոր հիմնադրութեան երկու հարիւրամեակը:

— Նպաստից Յանձնաժողովը որոշած է Մարաշի որբանոցի շէնքին մէջ արհեստանոց մը բանալ տալ այն 100 ոսկիի՛ գումարով զոր նախրած են ժամահարեան եղբարք Մոսկուայէն:

ՍՕՖԻԱՅԷՆ կը հեռագրեն թէ Սոպրանիէն քուէարկեր է այն օրինագիծ: որով կը ջնջուի ներքին մաքսը և անոր տեղ կը դրուի յաւելուած մը մաքսի վրայ, որ համայնքներուն պիտի

յատկանայ, վասն զի ներքին մաքսը մինչև հիմա անո՛ր կը գանձէին: Ներքին մաքսին ջնջումովը հարկ եղած է սուրբ մը գնել ալբոյի և գինիի վրայ: Սօպրանիէն ընդունեց նաև այդ առթիւ ներկայացուած օրինագիծը:

— Իզմիրէն կը գրեն թէ բազարին ծանօթ վաճառականներէն Պալէօզեան Մատթէոս էֆ. ծանր վտանգ մը անցուցեր է հետեւալ պարագաներուն մէջ: Մանիսայի մօտերը իր ունեցած ագարակէն վերագործին, Գում-Չայ գետէն անցնիլ պէտք կ'ըլլայ որուն ջուրերը անձրեւներուն պատճառաւ չափազանց բարձրացած էին: Պալէօզեան էֆ.ին ընկերացող սեւամորթ թուրք պահապանը կ'առարկէ թէ կրնան վտանգուիլ. բայց Պալէօզեան էֆ. իր հեծած ձիուն խոշորութեանը վստահելով գետը կը մտնէ. հազիւ բանի մը քայլ յառաջացած էր, երբ ձիուն ետեւի ոտքերը աւազին մէջ կը խրին և ձիաւորը վար նետելով, կը փախչի, դուրս կ'ելլէ ջուրէն: Այդ միջոցին, Պալէօզեան էֆ.ն բռնած էր ախրնէրէն, ինչ որ կրնար աղիտաւոր հետեւանք մը ունենալ, երբ թուրք պահապանը կը հասնի, ջուրը կը ցատկէ, ու մէկ ձեռքին վրայ կ'առնէ զայն, իսկ միւս ձեռքովը մէջքի գանակը հանելով աւազին մէջ կը խրէ՝ հասանքին սաստկութեանը դէմ՝ դնելու համար: Այսպէս, կը գիմանայ կէս ժամի չափ. դիպուածական բարեբաղդութեամբ մը, ագարակէն երկու յոյն պահապաններ հասնելով կ'ազատեն թէ՛ Պալէօզեան էֆ.ն և թէ՛ արիասիրտ պահապանը: Պալէօզեան էֆ. նոյն գիշերը ագարակ կ'անցընէ, և յաջորդ օրը քաղաքը կը վերագտնանայ: Աւելորդ է ըսել թէ արժանաւորապէս պիտի վարձատրէ իր ազատարանները:

«Մարգարէութիւններ» խորագրով յօդուածներու շարքը ընդհատուած են ԳՈՒՇԱԿԻ յանկարծ հիւանդանոցուն պատճառաւ:

ՊՈՉԱԻՈՐ ՍՈՒՏԵՐ

Թերթերնիս մամուլը դրուած միջոցին այսօրուան սուրհանգակով ստացած Պոլսական թերթերուն մէջ, որոնց թուականը կը հասնի մինչև յունուար 27 հինգշաբթիի, Պայրամին երրորդ օրուան Բերայի ահօնի? Հըրդեհի մասին բան մը գրուած չէ, զոր տեղական թերթ մը հրատարակած էր, թէ և վերապահութեամբ: Վառնայի մէջ գտնուող կարգ մը անհոգ պարօններու բանն է դարձեալ, որոնք թէ հասարակութիւնը և թէ տեղական թերթերը նամակներով իսկ խաբելու կը յանդգնին: Ամօթ իրենց . . . :

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ի Ր Ո Ւ Ի Ե Ա Ն

... Խմբագիր,

Հաճեցէք ներկայս անփոփոխ հրատարակել, ուրիշ օրինակ մը իրաւունքի և օրինակ մըն ալ շարժումի դրկած եմ:

Տեղական թերթերու միջոցաւ «Թուրքին վայրագութիւններէն փրօտուած տիկնոջ մը ի նպաստ» ըլլալիք վիճակահանութեան մասին բանի մը գիտողութիւններ ըրինք, որպէս զի ձեակերպուած խաբերայութեան մը զոհ չերթան միամիտները:

«Շարժում»ի խմբագիրը մեր առջի նամակին համակարծիք գտնուելէն վերջը, անցեալ շաբաթ օրուան թուով, փոխանակ մեր երկրորդ նամակը հրատարակելու, կըսէ, «Մենք կը կարծենք թէ այդպիսի մի այրի տիկին գոյութիւն չունի: Եթէ այդ տիկինը գոյութիւն ունի և իսկապէս ազնիւ զգացումներէ զրգուած ատանկ ինդիրներ կը հանէ ու եթէ սոսկ էնթրիկան մը չէ, թող բարեհաճի իր հասցէն տալ կամ պաշտօնապէս երևան գալ և իր ապնուափայլ դէմքը ցոյց տալ...»:

Բոլորովին պաշտօնական հանգամանքէ զուրկ համարուող վիճակահանութեան մը համար երբ դիտողութիւն կընենք, էնթրիքան մը եղած չըլլալէ զատ, կը կասկածիք թէ մի գուցէ Շարժումի Պ. Խմբագիրը ինդրոյն շատ մօտէն կանխաւ տեղեկութիւն ունեցած ըլլայ և մեր նամակներն ալ իր ջիղերը գրգռած ըլլան: Չենք գիտեր թէ Շարժումի Պ. Խմբագիրը տիկիններու լուսափայլ դէմքերը

գիտելու համար հրապարակ իջած է թէ ժողովուրդի մը բարոյականը գատարակելու:

Պ Խմբագիրը աւելի լաւ կընէր հրատարակաւ այդ գրածները ետ առնել և վիճակահանութեան ձեռնարկող պարօններուն լուսափայլ դէմքերը հրատարակելու բան թէ ըլլալիք խաբէութեան մը պաշտպան հանդիսանար:

Ա յ Ր Ի տիկին Մ արիամ Մինասեան

(Այրի տիկին Մ արիամ Մինասեանի սոյն կրկնակի նամակները ինչպէս նաև մեր քով գտնուած վիճակահանութեան տամակը ցոյց կուտան թէ ճշմարտութեան մը հանդէպ կը գտնուինք, ալ խաբերայութիւնը երեւան ելած է. մի նակ ցաւալին այն է որ կան կարգ մը տխմարներ որ ոգի ի բռն կաշխատին այս բանը ժածկելու, և այսօրինակ հանրօրոյ գրութիւնները հրապարակելու յանցանքը դորժած ըլլալնու համար զմեզ նախատելու:

Ինչ ըսենք, Աստուած անանկներուն ալ շնորհք տայ:

Թ Ա Տ Ր Ո Ն «Ս Ա Ն Դ Ր Ա Լ»

Վաղը կիրակի գիշեր, յունուար 30 առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ՝ «Համբերութիւն» կամ «Մէրառանց համարման» տրամագօմէտի 5 արար: Խիտ ծիծաղաշարժ գաւեշտ մը:

Յառաջիկայ երեքշաբթի գիշեր 1 փետր. առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ «Ալճերիոյ պատերազմը» կամ «Արապ մուրացկանը» թատերգութիւն 6 արար: Չաւեշտ 1 արար:

ՉԵԿՈՅՑ

Թերթիս թատերական քրոնիկագիրը առաջին օրէն «Թիւ 25 աթոռ» ծածկանուով կը ստորագրէ, հետեւաբար բոլորովին անտեղի է այն ենթագրութիւնը թէ թատերական քրոնիկը գրողը նոյն գիշերուան 25 թիւ աթոռին վրայ նստող անձնաւորութիւնը եղած ըլլայ:

Ի ԱՌՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԶՈՅՔ

Դեռ հազիւ քսան տարեկան էր Պաղտասարը երբ ինքն ալ շրացած ամերիկեան տղարներու ճայնէն, կը թողուր ծննդավայրը, Խարբերգ, եւ կ'երթար Նոր Աշխարհ գրամ շահելէ ետքը վերադառնալու նպատակաւ: Պաղտասար բացի իր ծնողքէն՝ Խարբերգ, կը թողուր նաև իր նշանածը ու կերթար ենթարկուելու Նոր Աշխարհի գործարանական տաժանելի աշխատութեան: Ամերիկա հասնելով, կը յաջողի մանել «Վ.ՈՒՄԻԼՊ» հրկաթաթելի գործարանը որ նշանաւոր է իր զոհերով: Պաղտասար իր ըստացած օրավարձով իր ծնողքին յաճախ նիւթապէս օգնելէ վատ պղտիկ գումարներ ալ գրամասան կը յանձնէ, ուր հետզհետէ հաւաքուած գումարով՝ կարեւոր գրամագլուխ մը կը գոյանար. եւ երբ կը տեսնէ որ իր խնայած տղարներու թիւը հասած է հազարի՝ կը թողու գործարանի տաժանելի աշխատութիւնը և իր ձեռք բերած գումարին շնորհիւ կը յաջողի նպարտաճառի խանութ մը բանալ. բանի մը տարի ալ իր առեւտրական գործին մէջ յաջողութիւն գտնելով, կարող կըլլայ գնել քաղաքին մօտը ընդարձակ ագարակ մը ու կը սկսի շահագործել:

Ամերիկայի մէջ ագարակատէր մը ըլլալու փառքը՝ մոռցնել կուտայ ծննդավայրը, բայց ոչ ծնողքն ու նշանածը—ու կ'որոշէ իր մայրը և նշանածը հոն տանելով ամուսնանալ. այս նպատակաւ կարեւոր գումար մը կը զրկէ մօրը իրբու ճանապարհածախս, ուր նամակով մը կը թախանձէ իր մօրը որ նշանածին հետ Ամերիկա երթայ առանց ժամանակ կորսնցնելու: Պաղտասարի մայրը իմանալով իր զակին յաջողութիւնը, ուղարկուած գրամը ստանալուն պէս ճամբայ կ'ելլէ իր հարսնացուն հետ գէպի Ամերիկա երթալու:

Թող անոնք իրենց ճամբորդութիւնը շա-

րունակեն. մենք ալ հանդիսատես ըլլանք մեր ագարակատիրոջ նոր բաղդին. բա՛ղդ մը որ շատերու նախանձը կը գրգռէր: Պաղտասարի (այժմ ՀԱՌԼԸ ԺՕՆՍՕՆ) ագարակին կից կը գտնուէր ուրիշ բնիկ ամերիկացիի մը ագարակը որ իր ընտանեօջ հոն կը բնակէր. մեր պարոնը առաջին հանդիպումով կը յափըշտակուի իր նոր գրացիին աղջկան գեղեցակութենէն և կը մոռնայ թէ անդին ծննդավայրին մէջ նշանած մը ունի տարիներէ ի վեր սպասող, և որ հիմա ճամբայ ելած է իր իսկ հրամանով Ամերիկա գալու. բայց երբ հաշուի կ'առնէր ասդին ամերիկուհիին ունեցած առաւելութիւնները, գեղեցկութիւնը ուսումը աշխուժութիւնն ու մանաւանդ ագարակի ալ տէր ըլլալը, յիմարութիւն կը սեպէ հայ նշանածին սպասելը. բանի մը անգամ իր գրացի օրիորդին հետ խօսակցելէ ետքը, մեր ագարակատէր պարոնը կը յաջողի անոր սիրտը գրաւել եւ հաւանութիւն ստանալ ամուսնութիւն մը կնքելու: Խնդիրը կը մնայ հօրը հաճութիւնը առնելու ձեւակերպութեան. առանց ժամանակ կորսնցնելու, Պատուելի Գասպարեանը կը զրկէ Ամերիկացի ագարակատիրոջ բով, աղջկանը ձեռքը խնդրելու: Հայրը կուտայ իր հաճութիւնը և բիշ օրէն նոյն պատուելին բաղդ կ'ունենայ «Մօլլի Ճոնսոնի» և «Միսիս Ֆլորայի» պսակի խորհուրդը կատարելու:

Երջանկութեան դարագլուխը սկսած էր մեր պանդուխտին համար այն օրէն, երբ տիպար «Եանքուհի»ի մը ամուսինը ըլլալու բաղդը ունեցած էր. ուրիշ հայ երիտասարդներ սկսած էին Տիկին Ճոնսոնի միւս քոյրերուն շուրջը դառնալ Պ. Պաղտասարի բաղդին մասնակից ըլլալու երազանքով:

Եւ իրօք սիկին Աւետիսեանը հիանալի գեղեցկութեան և աշխուժութեան տէր կին մըն էր. կը պատմուէր թէ կէս պիշերին կելլէր, ձիերը կը լծէր կառքին եւ ագարակին կովերէն կ'թած կաթը բեռցնելով երեք ժամուան ճամբորդութեամբ կը տանէր քաղաք, իրենց կաթնավաճառ յաճախորդներուն ցըրուելու. շատ հեղ այր և կին իրենց սեփա-

կան կարքը նստած պտոյտներ և այցելութիւններ կը կատարէին . այցելութիւններու պահուն Պ . Պաղտասար մանուկը հպարտութեամբ իր կինը կը ներկայացնէր ծանօթներուն : «Պատիւ ունիմ ձեզ ներկայացնելու Տիկին Աւետիսեանը» ըսելով . եւ փոխադարձաբար իր ծանօթները կը ներկայացնէր Տիկնոջը : Միայն թէ աւելի հաճելի ըլլալու համար կը գտնէր իր բարեկամներուն անդրիւքէն անունը . օրինակի համար, Յովհաննէսը «Ճան»ի և կարապետը «Չարլոի փոխելով կը ներկայացնէր իր բարեկամները :

Մինչ Պ . Պաղտասար ասդին կը վայելէր բազմաթիւ իրեն պարգեւած բարիքները, իր մայրը, բոյրը և նշանածը կը հասնին նիւ Եօրբ, ուր կ'իմանան զժբազդ եղելութիւնը . կարեւրի չէ ըմբռնել խեղճ աղջկան յուսահատութիւնը, այն ատեն ուր կ'իմանայ թէ նշանածը զինքը Լքելով ամուսնացած է օտարուհիի մը հետ : Աղջկան եղբայրը կ'ընդունի իր բոյրը և վայն խնամելու հոգը կը ստանձնէ : Այսպէս կը սահէին Պաղտասարի երջանկութեան և իր նախորդ նշանածին գառնութեան օրերը :

Սակայն խիստ կարճատեւ եղաւ այդ երջանիկ կեանքը և ամուսնութենէն երեք ամիս յետոյ, Պաղտասար ամուսնութեան կատարեալ զոհ մը դարձած էր, պարզ խօսքով վստահած էր իր կնոջ կողմէ, ինչո՞ւ . երկու խօսքով կարելի է բացատրել այս պատուով միացման անպատուութեամբ բաժանումը, — Արեւելեան եւ արեւմտեան բարքերը չէին համաձայնած իրարու հետ, ահա բոլոր գաղտնիքը Պաղտասարի կարճատեւ երջանկութեան եւ յաւիտենական զժբազդութեան : Թէեւ Պաղտասարը : «Չարլոի և Աւետիսեանն ալ «Ճան»ի փոխած էր, սակայն չէր կրցած փոխել իր բարքերը ու չէր կրցած ներգաշնակութիւն կազմել իր կնոջ հետ : Ի՞նչ որ Ամերիկացի կնոջ համար պարզ համարձակութիւն էր, յաշտ հայ երիտասարդին անպարկեշտութիւն կը թուէր և ինչ որ հայ երիտասարդին համար պարկեշտութիւն և առաքինութիւն էր, յաշտ Ամերիկացի կնոջ տգի-

տութիւն և անտարբերութիւն կը թուէր : Քիչ ատենէն անտանելի եղած էին իրարու . հայ երիտասարդը չէր կրնար հանդուրժել որ իր կինը նոյն համարձակութեամբ տեսակցէր ուրիշ այր մարդոց հետ ինչ համարձակութեամբ որ պիտի վարուէր իր ամուսնին հետ . և Խանքուհին ալ չէր կարող տանիլ իր էրկան ոչ համարձակ և անտարբեր վարմունքը, և օր մը օգտուելով իր բանի մը ծանօթ երիտասարդներու ներկայութենէն, բաշտութիւնը ունեցած էր Պաղտասարի թեւէն բռնելով դուրս վճռելու : Այդ օրէն սկսած էր մեր պոնդուխտին զժբազդութեան թուականը : Խեղճը իր ագարակէն ալ զրկուած, կը թափառէր գլխիկոր, իբրեւ կենդանի զոհ մը խաւն ամուսնութեան : Խօսակցիցի

Ծ Ի Ծ Ա Ղ

ՍԻՐԱԼԻՑ ԱՄՈՂ ՄԸ

Անգլիոյ մէջ նոր ամուսնացած ամուսնացած հանրային պարտեզ մը այցելեց : Պարտեզին մէկ անկիւնը գտնուած մացառուտի մը առջեւի նստարանին վրայ առանձնացան, չի նշանաւարելով մացառներուն միւս կողմը նստարանի մը վրայ մրաւիտոյ ծերուկը :

- Երիտասարդը . — Ա՛խ . . . սիրելիս . . . վերջապէս երջանկացանք . . . :
- Երիտասարդուհին . — Այո՛ . . . հոգիս . . . :
- Երիտասարդը . — Ա՛խ . . . անուշա . . . :
- Երիտասարդուհին . — Օ՛հ . . . քաղցրիկս . . . :
- Երիտասարդը . — Սիրո՞ւն աղաւնիս . . . :
- Երիտասարդուհին . — Իմ սիրո՞ւն գառնուկս . . . :
- Երիտասարդը . — Իմ անուշի՛կ սոխակըս . . . :
- Երիտասարդուհին . — Աղու՞ճ դեղձանիկս . . . :

Երիտասարդը — Օ՛Տ . . . իմն սիրուն
փիսիկս . . . :

Երիտասարդուհին . — Իմ չարածճի շը-
նիկս . . . :

Երիտասարդը — Օ՛Տ . . . իմ անուշիկ
ծիծեռնակս . . . :

Մացառներուն հտեւէն , ձերուկը զ՛յ-
րացած . . . կոշտօրէն պոռալով .

— Է՛յ . . . ինձի նայեցէք . . . չի կըր-
նա՞ր ըլլալ որ զիրար «Կենդանաբանական
պարտեզ» անուանէք . . . սե կարճ կապէք :

Գպրոցական բնութիւն մը .

Արթական — բննիչ մը գպրոց մը այցե-
լելով , Արծնագիտութեան դասի մը ատեն
գասարանին աշակերտներուն հարցուց .

— «Մասուն ֆղշտացիները կոտորելու
համար ի՞նչ դէնք գործածեց» :

Տեսնելով որ աշակերտներն այս հար-
ցումին պատասխանն յիշելու կը վարանին ,
ուզեց անոնց քիչ մը օգնել . . . : Իր ցուցա-
մատը , իր ձնօտին վրայ դնելով , հարցուց՝

— Ասիկա ի՞նչ է . . . :

Աշակերտները (միաբերան) — Էշու մը
կղակը . . . :

Որդիական սէր

Հարուստ և ձեր հայրը (իր նոր ամուս-
նացած աղջկանը) . — Ա՛խ , սիրելի՛ աղջիկս . .
չեմ՝ գիտեր թէ՛ ասկէ վերջ ի՞նչպէս ժամա-
նակ պիտի անցնեմ . առանց քեզի ի՞նչպէս
կրնամ մնալ :

Աղջիկը . — Հոգ մի՛ ընէք , հայրի՛կ . . .
պսակի արարողութենէն վերջը ամուսինս ին-
ձի խոստովանեցաւ թէ՛ տուն մը պահելու
համար բաւականաչափ գրամ չէ խնայած .
հետեւաբար . . . ղուք առանց ինձի չպիտի
մնար . . . :

Կեզր . Ափրիկէի մէջ .

Նորիկ միսիոնարը մարդակերներու ձեղա-
պետին . — Յեղապետ , կը փափաքիմ՝ իմա-
նալ թէ տարիներ առաջ Բօլլըրդ Պրատուն ա-
նունով միսիոնար մը ձեր Բարձրութեան եր-
կիրը այցելած է .

Մարդակերը . — Եթէ քիչ մը սպասէք ,
այդ մասին ձեզի լուր մը կրնամ տալ . . .
որովհետեւ հին Անաշաղուցակներու (մեկ) ան-
գամ մը պէտք է աչքէ անցնեմ . . . :


Մանչէսթըր ,

Թարգմ . Կ . Մ . Ք .

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ

Մինչև հիմա պատկերները առանց տեղա-
փոխելու հրատարակեցինք , գաղափար սը տա-
լու համար կարգ մը հետաքրքիրներու թէ
ինչպէս կը կարգացուէին նկարները : Արդ ,
այսօրէն սկսեալ Եւրոպական հանդէսներու
ըրածին պէս նկարները տեղափոխելով կը հը-
րատարակենք , առաջին անսխալ կարգացողին
նուէրն ալ կրկնապատկելով :

ԵԵԵԵԵԵԵԵ Գ



ա զ ն

ա կ ս

Առաջին անսխալ կարգացողին նուէրն
է երկու կատակերգութիւն :

Թիւ 146 «Հայելի»ի նկարահանուկը
կարգալ այսպէս .

«Պատուեցէք ձեր բոլոր մեծերը»

12 նամակագիրներէ 10 անսխալ կարգա-
ցեր էին հետեւեալ կարգաւ . Տ . Թ . Թորաման-
եան , Գ . Կիւրպէսերեան . Ա . Սթամպոլուեան .
Ն . Գարապաճագեան . Վ . Հաճիեան . Ա . Սը-
վաճեան . Գ . Եսփրուեան . Վ . Ղուկասեան
Վառնայէն . Ն . Համբերեան և լեւո՛ր Չարլզ-
եան Սօֆիան :

Մ Ո Ւ Է Ռ

ԲՈՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ



(Շարունակութիւն)

ՏԵՍԻԼ Գ.

Գերոնիմոս, Մերուն (հոբը) Փռնակ

Գեր. — Պարոն Մերուն, բերախ եմ որ նորէն զքեզ հոս գտայ, ոսկերիչ մը հանդիպեցաւ հիմա, որ լսելով թէ հարսիդ բաւանթի մատնի մը բնծայ պիտի տաս՝ ինծի աղաչեց որ քեզի ըսեմ թէ՛ ինքը աղէկ մատնի մը ունի ծախելու:

Մեր. — Հիմա արտօրալու բան չունիմ:

Գեր. — Տ՛ր ողորմեա, առ ի՛նչ խօսք է, քիչ մը առաջ կարտօրայիբ կոր նէ՛:

Մեր. — Աղէկ, բայց ես կամաց կամաց միտքս կը փոխեմ կոր, կէս ճամբէն ետ դառնալը աւելի դիւրին է:

Այս գիշեր երազ մը տեսայ, մտքէս ալ չելեր, եւ սրովհետեւ երազները հայելիի կը նմանին. որուն մէջ մարդ ինչ ըլլալիքը առաջուց կը տեսնէ, պէտք է որ ես ալ այն երազին մեկնութիւնը իմանամ: Երազիս մէջ տեսայ որ նա մը նստեր էի, ծովը շատ կ'ալեկօծէր կոր. մէյ մ'ալ...

Գեր. — Պ. Մերուն, ներողութիւն, քիչ մը գործ ունիմ, քեզ մօտիկ չեմ կրնար ընել, երազէ ալ ամենեին չեմ հասկնար, ամուսնութեանդ համար ալ, երկու գիտուն փիլիսոփայ դրացի ունիս, անոնք պէտք եղածը կը ան զուրկել եւ քեզ գոհ ընել, խկ ես իմ առջի զուրյածներուս վրայ միշտ հաստատ մընալով, մնամ խորին ծերութեանդ խոնարհ ծառայ (Մեկնի):

Մեր. — (Մեկուտ) Պարոն Գերոնիմոսըն իրաւունք ունի, պէտք է որ երթամ սա մարդիկը գտնեմ ու անոնց խորհուրդ հարցնեմ:

Փառ. — (Եկած տեղը դառնալով ու ծերունը չի տեսնելով) Կարուէ՛ լի՛րք, տգէտ, տգիտացուցիչ, տգիտացեալ. ե՛րթ ընդ ետս իմ, բարեկամ, ստահակ ոմն ես

դու, այր անտեղեակ վարժից, արտաքսելի ի սահմանաց բովանդակ գիտութեանց եւ գարութեանց:

Մեր. — Ահա ուզածիս մէկը գտայ:

Փառ. — (Նշոյնպէս) Այո՛, զօրաւոր ապացուցութեամբք հաստատեցից քեզ, ց'Արիստոտելէ բերից քեզ զվկայութիւն ՚ի փիլիսոփայէն փիլիսոփայից, զի տգէտ ոմն ես դու, տգիտագունից տգիտաղեղեալ, տգիտազինող, ամենայն հողովիք անուանց եւ խոնարհամարք բայից:

Մեր. — (Մեկ) Մէկուն հետ կուր ունի. (բարձր) Պարոն պատուելի:

Փառ. — (Նշոյնպէս) Նախագասութիւնըդ այդ դատապարտելի է ընդ ամենայն ոլորտս փիլիսոփայութեան:

Մեր. — (Մեկ) Շատ սրգողցուցած պիտի ըլլան այս մարդը. (Փառնակին) ձեռքըդ եմ պահեր պարոն պատուելի:

Փառ. — (Գառնալով) Մառայ եմ:

Մեր. — Կարելի՞ է:

Փառ. — (Ելած տեղը դառնալով) Գիտիցէ՛ս արդեօք, որպիսի՞ յանցանաց մեղապարտ ես, հնարել զբառս եւ եղծել զկանոնս ամբարշտիո:

Մեր. — Ես...

Փառ. — Զգուելի են տարազք խօսիցըդ, անտանելի արտասանութիւնդ, եւ նորասիրութիւնդ ի գրէական յանցանքս գրեցիք քեզ:

Մեր. — Ես քեզի...

Փառ. — Հաճոյ եւս է ինձ սատակիլ՝ քան ընդունիլ զսասցեալդ, զկարծիս իմ հաստատեցից մինչեւ ցվերջին շիթ մեկանի իմոյ:

Մեր. — Ես...

Փառ. — Այո՛, աղգք եւ աչինք անցցեն եւ բանք Արիստոտելի մի անցանիցեն:

Մեր. — Պարոն Արիստոտել, կրնա՞նք մի իմանալ ձեր բարկութեան պատճառը:

Փառ. — Անկէ իրաւացի բան չկրնար ըլլալ:

Մեր. — Ի՛նչ է, ըսէք:

Փառ. — Տգէտին մէկը առջիս սխալ նախագասութիւն մը ըրաւ. ստիպալի, զարհուրելի, քսումնելի նախագասութիւն մը:

Մեր. — Կրնա՞նք մի իմանալ, ի՛նչ է:

Փառ. — Սոսկալի՛ բան չէ՛ մի որ մարդ
ելլէ բազմութեան մէջ գլխարկին ձեւը
ըսելու տեղ գլխարկին տեսակը ըսէ :

Ծեր. — Ի՞նչ ըսէ ըսիր :

Փառ. — Ես կը պնդեմ որ գլխարկին
ձեւը պէտք է ըսել եւ ոչ տեսակը .

(Նորէն ելած տեղը դառնալով) Այո, տգէ՛տ
տգիտացուցիչ տգիտացեալ դու, ասանկ
պէտք է ըսել, եւ ասոնք նոյն իսկ Արիս-
տոտելի գործածած բառերն են, որ հայր
եղաւ գրականութեան :

Ծեր. — (Գեղուտի) Ես ալ կարծեցի թէ
աշխարհք կործաններ է. (Փառնակին) Պա-
րոն Պատուելի, մէկդի ձգէ ատոնք եւ
ինձ մտիկ ըրէ :

Փառ. — Զայրոյթէս ինչ ընելս չը
գիտեմ :

Ծեր. — Հանգիստ թող սա գլխարկ-
ները . բան մը ունիմ քեզի զուրցելիք :

Փառ. — Ապերախտը :

Ծեր. — Աստուածդ սիրես իս նայէ :

Փառ. — Անկիրթը, ինծի անանկ բառ
մը ըսել :

Ծեր. — Ապուր է կերեր :

Փառ. — Բառ մը որ նախնիք չէին
գործածեր :

Ծեր. — Իրաւունք ունիտ. (Փառնակին եւ
լած տեղը դառնայ) Այո՛ յիմար ախմար
մ'ես դու որ գրող կարգացող պատուե-
լի մը հետ վիճել կուզես. (Փառնակին)
Ահա լմնցաւ, հիմա կաղաչեմ իս մտիկ
ըրէ. ես կ'իկի մը պիտի առնեմ որ տա-
նըս մէջ ինծի ընկեր ըլլայ. շատ աղոյր
ու կոկիկ է. սիրտս սիրեց զինքը. ինքն
ալ կը խենդենայ կոր ինծի հետ կար-
գուելու համար. հայրը կուտայ կոր,
բայց ես կը վախճամ կոր քիչ մը. գի-
տեսա՛ ինչո՞ւ համար. հրամանքդ պատ-
ուելի մը ըլլալուդ կաղաչեմ որ կար-
ծիքը ըսես ինծի :

(Շար.)

Մ. 2.

Հ Ո Վ Ա Ս Ո Ւ Ն

Սիրուն բանաստեղծութեանց հա-
տորիկ մըն է, ընթերցանութեան ար-

ժանի: Գինն է 25 սանդիմ. շատ առնող-
ներու համար չափաւոր զեղչ: Գիւնել
Զարպհանէլեան գրատուն Վառնա:



Հայկական սրճարան և ճաշարան,
ընթերցարան, պիլարատ, կիլակ եւ
ընտիր սիկարներ: Հաստատութիւնս
բաց է ամեն օր առաւօտեան ժամը

5էն մինչև 2: Երրորդ Ամբիւ թիւ 388:

28րդ փողոցին մօտիկ ի Նիւ—Եօրք:

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

«Գայլ Վահան» սղբերգութեան հան-
գուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը
յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը
Գինն է 1 Փրանք: Կեդրոնատեղին Վառնա
Արևելեան տպարան: Օննիկ Բարսեղեան:

Ա.Գ.

Ներկայ 1900ի մէջ հրատարակուելիք
«Վարդանանց պատերազմը կամ Վասակ Սիւ-
նի և Վարդան Մամիկոնեան» բնական գոր-
ծին տպագրութեանը գիւրութիւն մը տուած
ԸԼԼալու համար այժմէն բաժանորդագրու-
թիւն մը բացուած է. փափաքողները թող
ասձին իրենց հասցէները ու բաժնեգիրը
(2 Փր.) զրկել հեղինակին հասցէին.
ըտաչէս Կորապետեան (բօսթ ուս-
թանգ) Հուժկա:

Հրատարակութենէ վերջը սոյն գիրքը
պիտի ծախուի 2, 70 սանդիմի:

5—10

Отговорничя М. Сконовъ
Печальница „Взаимность“ — Варна.